ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2013 թվականի N 224-Ա

ք. Հրազդան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿԻՆԿՈՒՇ ՎԱՀԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<1988-1992 թվականների Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի ժա/ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Միավորված Ազգերի Կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության՝ միգրացիոն պետական ծառայության բնակարանների բաշխման համատեղ հանձնաժողովի 1995թ. հունվարի 13-ի թիվ 24 պայմանագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 1-ին թաղամասի 5-րդ շենքի թիվ 1 երեք սենյականոց բնակարանը սեփականության իրավունքով հատկացնել Կինկուշ Վահանի Խաչատուրովային:

2. Պարտադիր կարգով պահպանել սեփական բնակարանի շահագործման կանոնները:

3. Բնակարանի սեփականատերն է՝

1) Կինկուշ Վահանի Խաչատուրովա

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ